

ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ (Խախնական դիտարկումներ)

Վալերի Միքոյան

Վիլիսովիայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի պետական տեսչության համալսարանի
Կառավարման ամբիոն

Առաջնորդման երևույթի հայ առաջին տեսաբան Եզնիկ Կողբացու հայացքների նորովի դիտարկումը մեզ հիմք է տալիս նրան համարելու նաև առաջնորդման նորագույն տեսություններից մեկի՝ «սպասարկող առաջնորդման» Խախնահայրը¹: Ես, կարծում ենք, Ե. Դարի հայ վիլիսովիայի վաստակը հարկ է հիշեցնել ոչ միայն այլազգիններին (որոնց անտեղյակությունը, ամենից առաջ, մեր՝ հայկական մշակույթի ինքնամատուցման և հաերաճանաշեցման համար պատասխանատու մտավորականներին, մեղավորությունն է), այլև որոշ հայ քաղաքացինների, որ անհարկի գործածության մեջ են «լիդերությունը»: Մերժելին հասկացության բառային արտահայտությունը չէ սոսկ (քեզետ հատկապես հայերն «առաջնորդ» բառն է մեկն բացահայտում երևույթի երրուսնը. այսինչ փոխառու լեզվում «leader» բառի համեմատաբար լայն ընդգրկումը երբեմն իմաստային շփոր է զոյցնում)², այլ սեփական տեսական ժառանգության մոռագումը (որի զաղափարածին ներուժը ստեղծագործաբար չօգտագործելը հավասարագոր է անդարձ կորսույան), որպես դրա հետևանք՝ օտար զաղափարների կույր յուրացումը՝ սեփական ազգամշակութային առանձնահատկությունների անտեսմամբ: Միուլ բանիվ, «առաջնորդումը» հայ վիլիսովիայական մտքի ընդոծին թեմաներից է, և ընդհանուր խնդիրները, տարատեսակ հայեցակարգերն ու տեսությունները վերլուծելիս շմոռանամբ հայացը նետել սեփական անցյալին:

Առաջնորդման վիլիսովիայական ուսումնասիրության հանդեպ ներկա հարաճուն ուշադրությունն արտացոլում է XXI դարի կառավարաբանական հարացույցի ուրվագծման հրամայականի: Խնչելս հայունի է, XX դարի սկիզբը նշանավորվեց «գիտական մենեջմենթ» հեղափոխիչ ազդեցությամբ, արտադրության մեջ և հանրային կյանքի մուտ ասպա-

բեզներում ռացիոնալ կազմակերպման սկզբունքների ներդրմամբ, ինչը նշանակում էր անհատի վարքագիր ենթարկում համակարգի գործառության տրամարանությանը: Սակայն XX դարի վերջին ակնհայտ դարձավ (ցայտուն ձևակերպվեց հետարդիական փիլիսոփայության դրույթներում), որ կառավարման գերկենտրոնացումը, կազմակերպության (հասարակության) շարքային անդամի վարքի անվերապահ ենթարկումը համակարգի գործառության տրամարանությանը, նոյն այդ անդամի (և քաղաքացու) ձեռնածուական կարգավորումը տեխնիկական նորագոյն միջոցներով, առհասարակ մարդկանց սոցիալական վարքի շահամբ-տումը «տևտեսական մարդու» կաղապարին հարմարեցնելը բնավ էլ համարժեցորեն չեն արտահայտում իրողությունը, դարձել են անարդյունավետ: Նոր առաջնորդի և նորովի առաջնորդելու պահանջն առավել կրկնվող հարցադրումն է: «Մեր տևտեսության, մեր հասարակության, մեր մոլորակի, մեր հոգիների առողջությունը կոչ է անում նոր և համընդգրկուն առաջնորդման տեսակի»²:

Կառավարարանական և քաղաքագիտական գրականության մեջ «առաջնորդ» հասկացությունը սահմանվում է «կառավարիչ» («մենեջեր», «պետ», «ղեկավար», «տևօրեն») հասկացությունից տարբերակելու եղանակով: Կառավարիչը հենվում է իրավունքի ուժի վրա, ենթակաների վրա ազդում առավելապես վարչականական լծակներով: Առաջնորդը հենվում է հեղինակության, վայելած հարգանքի, վստահության վրա: Կառավարիչը հրամայում է պահանջում, կարող է պատժել, առաջնորդը համոզում է ուղղորդում, ոգևորում: Սա է տարածված ըմբռնումը⁴, և ճիշտ է արտահայտում մարդկանց համակեցության, համատեղ գործունեության երկու կողմն գործարանական և միջամանային: Այդուհաւելիք, այսօրինակ տարբերակումը երբեմն հասցվում է անհիմն հակադրության: Կառավարիչը վարչարար է, առաջնորդը՝ նորարար, առաջինը կողմանորշված է դեպի համակարգը և կառուցվածքը, երկրորդը՝ դեպի մարդիկ, «կառավարիչը պատճենն է, առաջնորդը՝ բնօրինակը», առաջինը կատարող է, երկրորդը՝ կատարելագործող, կառավարիչն ընդունում է առկա վիճակը, առաջնորդը՝ մարտահրավեր նետում դրան, «կառավարիչը հարցում է «ինչպես» և «երբ», առաջնորդը՝ «ինչ» և «ինչու», առաջինը մոտակա խնդիրների է տեսնում, երկրորդը՝ հետահար և այլն.

այսպես ամփոփ շարադրելով գրականության մեջ ընդունված տարրերությունները՝ առաջնորդման ուստամասիրության ճանաչված տեսարան Ռենեխարը դրանք գևահատում է որպես «վիթխարի և վճռողշ»:⁵ Ինչարկե, մենք եղ ենք տարբերակում այդ երկուսի հանրային դերակատարումները, բայց, ինչ-որ չափով բառախաղի նմանվող, երբեմն՝ զավեշտական տարբերակումները⁶ չպետք է ստվերեն երևույթի եռթյունը: Մեզ համար եականն առաջնորդի կառավարչական գործումնեռությունն է՝ առաջնորդումը: Այսպես որ, շխտրանալով առկա մեկնաբանությունների մեջ, կեղողմնորոշվենք այս վարկածով, որ լավ կառավարիշը նաև առաջնորդ է, այլ կերպ ասած՝ առաջնորդումն ինքնին կատարյալ կառավարչի գործառույթներից է: Ամեն մի ասպարեզում, մարդկանց ջանքերի համադրման բոլոր իրավիճակներում (ինչպես նաև, ի դեպ, կենդանական աշխարհում, ասենք՝ գայլերի ռիմակն առաջնորդելիս) առաջնորդյան կոչված է իրականացնելու որոշակի կառավարչական գործումնեռություն՝ ուղղված տվյալ հանրույթի բնականու գործառությունն ապահովելուն:

Ըստունված է «առաջնորդում» երևույթն ածանցել «իշխանության» ըմբռուսումից: Եվ, իսկապես, չի կարող լինել առաջնորդ՝ գուրկ մարդկանց վրա ազդելու, վարքը ուղղորդելու հետապնդությունից, թեպես ամեն իշխանավոր չէ, որ նաև առաջնորդ է: Իշխանությունը, դասական ըմբռուսմամբ (Մաքս Վեբեր), անհատի (խմբի) հետապնդությունն է՝ տվյալ հանրույթի (կազմակերպության) շրջանակներում իրականացնելու սեփական կամքը (իշխանությունն օրինական է, եթե իշխյալները ընդունում են իշխանավորին և կամովին հետագանդվում, և, համապատասխանաբար, անօրինական է, եթե պարտադրվում է երանց): Առաջնորդումը անհատի կամքի (նպատակների, ցանկությունների) իրականացնումն է ենթակաների և հետևորդների մոցի և վարքի նպատակամուն ուղղորդման միջոցով:

Կառավարաբանության շրջանակներում ըստ իշխանության գործադրման կերպի, այսինքն՝ այլոց ուղղորդված գործումնեռությամբ սեփական կամքը իրականացնելու որոշակի «տեխնոլոգիայի», տարբերակում են անձնիշխանական, ժողովրդավարական և ազատական ոճերը⁸: Փոքր-ինչ այլ է առաջնորդման տեսակների տարբերակումը կառավարչական որոշում կայացնելու, գործարար հաղորդակցման, բախումների լուծման,

վերահսկողության իրականացման և կառավարչական այլ իրողություններում: Առաջնորդման երևույթի ընկալման տարբերություններն են ամրազրված «առաջնորդման ոճ», «առաջնորդման մողել», «առաջնորդման տեսություն» հասկացություններում: Ինչ վերաբերում է «առաջնորդման փիլիսոփայությանը», ապա դա հիմնականում ներառում է առաջնորդի աշխարհայացքը, սովորաբար գրեթե նույնացվում է «գործարարության փիլիսոփայությանը», «գործարարության բարոյագիտությանը». կամ է առավել նեղացվում է միևնույն «գործարարության վարվելակերպ»:

Որպես որոշակի վարրագիծ, ևպատակադրումների իրագործում, միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման տեսակ՝ առաջնորդումը հանգամանորեն նկարազրված և բավարար շափով տեսականացված է մասնագիտական հրապարակումներում: Փիլիսոփայական դիտարկումը սկսվում է, երբ փորձ է արվում պարզելու, թե ինչո՞ւ է առաջնորդն ընտրում այս կամ այն վարվելակերպը, ինչո՞ւ է կայացնում ուազմավարական ընույթի հատկապես տվյալ որոշումը (մերժելով մյուս հետարարությունները), ինչ արժեքային համակարգով է ուղղորդվում և այլս: Ուշագրավն այն է, որ եթե առաջնորդման ավանդական տեսությունները («մեծ անհատների», «անձնական գծերի», «իրավիճակային» և այլն) առավելապես նկարազրական են, ապա նորագույն տեսությունները («փիլիսոփակերպումային», «սպասարկման», «ազատազրող» և այլն) ընութագրվում են փիլիսոփայական ընույթի հարցադրումներով: Քանի որ կառավարման ելությունն այլոց վարքի ևպատակամեն ուղղորդումն է, աշխատանքի կատարում ուրիշների միջոցով, ապա հիմնարար հարցադրումը, կարծում ենք, այն է, թե առաջնորդն ինչպես է ընկալում սեփական անելիքը, իրավունքների և պարտականությունների հարաբերակցությունը, ինչպես է ընկալում մյուսներին, ինչ տեղ է նրանց հատկացնում ևպատակի և միջոցի, իրավական և բարոյական լծակների, վստահության և վերահսկողության հարաբերակցության և ընդհանրական ընույթի այլ խնդիրների լուծման մեջ: Կարելի է ասել, որ «առաջնորդման փիլիսոփայությունը» առաջնորդ-եւտոնորդ (ներակա) կառավարչական համակարգում կողմերի դիրքի և դերակատարման ընդհանրական իմաստավորմանն ուղղված հայացքների, դատողությունների, տեսական ընդհանրացումների ամբողջությունների ամբողջությունների:

Եթե փորձներ ուրվագծել առաջնորդի՝ հանրայնորեն ցանկալի (իդեալական) տիպարը և, այլուենուն, որոշակիացնենք ըստ հանրային իրողության, ապա, փիլիսոփայական առումով, հարկ է քննարկել, թե առաջնորդի դերին հավակնողի մտածելակերպին որքանով են հարազատ նպատակի և միջոցի, հետապնդության և իրականության, որոշակիության և անորոշության, կայունության և փոփոխականության, մասի և ամբողջ հարաբերակցության դիալեկտիկական ըմբռնումները և ինչպես են դրանք դրսնորվում երա գործելակերպի մեջ:

Առաջնորդումը որպես նպատակադրություն: Առաջնորդել՝ նշանակում է կանոնադրության ապագան և, ըստ այդ, հիմնավորել համատեղ գործունեության նպատակադրությունը: Առանց նպատակի չի կարող լինել արդյունավետ որևէ գործողություն։ Նպատակն ապագայի որոշակիացումն է որպես հատակ անելիք։ Առաջնորդման համգուցային օրակը նպատակին առնեցվող կառավարչական որոշման կայացումն է, որն էլ ուղղորդելու է մարդկանց հավաքական կամքը և եռանդը։ Նպատակադրության որակով է առաջնորդը դառնում այդպիսին, առանձնանում մյուսներից. որոշում կայացնելով՝ նպատակը նշելով, անձը դառնում է առաջնորդ, որոշումն իրականացնողները՝ հետևորդ և ենթակա։ Ամերիկյան կառավարաբանության և ահամապետ Փիթեր Դրաքերը գուր չի շեշտում, թե «առաջնորդը և կենծ առաջնորդը («misleader») միմյանցից տարբերվում են իրենց նպատակադրություններով»¹⁰: Իհարկե, երբեմն տասնամյակներ են հարկավոր լինում երանց հետահայց տարբերակելու։

Իսկ ի՞նչ է ընկած նպատակադրության, այլ կերպ ասած՝ ցանկալի ապագայի ուրվագծման հիմքում։ Ապագան, որպես հետապնդության վերածում իրականության, միաժամանակ և՝ որոշակի է, և՝ անորոշ։ Որոշակի է այնքանով, որ մարդկային իմացությունը հիմք է տալիս ճանաչելու իրերի օրինաշափ զարգացումը, զանագանելու պատճառահետևանքային կապերը, զիմանակում միտումները և մեր նպատակադրություն խարսխելու օրինաշափության վրա։ Ապագան անորոշ է, քանի որ գոյություն ունի պատահականություն, չեն բացառվում հիմնական հուսից առարկայական և ենթակայական պարագաներով շեղումները։ Արդ, նպատակադրության համար լոկ գիտելիքը բավարար չէ, առաջնորդի մտածելակերպի և գործելակերպի հարացուցում պես և ամրագրված

լինի օրինաշափության և պատահականության դիալեկտիկան, ապագայի ձևավորման մեջ որոշակիության և անորոշության կապի, հնարավորի և անհետարի հարաբերակցության, հավանականի և անհավանականի անջրպետի ըմբռումը և այլն: Նպատակադրման մեջ բացարձակ հավաստիության և ոխակի լիակատար բացառման ձգող առաջնորդի անխուսափելիորեն հիասթափեցնում է հետևորդներին, ավելին, ըստ որոշ տեսաբանների, այդպիսիք ուղղակի վասակար են, կազմակերպության և ողջ հակառակության կենսագործունեության խոչընդունություն¹¹:

Առաջնորդումը որպես կայտնության կառավարում: Ծիտակառաջնորդը ոչ թե վերացական կարգախոսներ է առաջադրում, այլ իրագործելի և պատակներ, ուստի և, միաժամանակ, առաջնորդը ստեղծում է դրանց կենսագործման որոշակի կառուցվածք, դրանով կազմակերպվածություն հաղորդում իրեն հետևող հակառակության: Հանգուցային խնդիրն առաջնորդի գործելակերպում կայտնության և փոփոխականության հարաբերակցության ճիշտ ապահովումն է: Խերին հասկանալի է, որ հեղիեղուկ, շարունակ փոփոխվող կառուցվածքը պիտանի չէ արդյունավետ գործունեության համար, բայց և շափազանց կոշտ կառուցվածքը ևս խոչընդունություն է վերածվում, ևսև միտում է դրանորում ինքնարար դառնալու, հանգեցնում դիվանակալացման (բյուրոկրատացում): Փոփոխության անհրաժեշտությունն անտեսող, առավել ևս հասունացած փոփոխություններին դիմադրող ամեն մի համակարգ վերջիվերջո փլուզվում է: «Կայունություն և առաջընթաց»՝ սա էր Օգյուստ Կունտի մշակած «նոր ընդհանուր փիլիսոփայության» հիմնարարերից մեկը. կայունությունը առաջընթացի հիմնական պայմանն է, առաջընթացը՝ կայունության անհրաժեշտ և պատակը¹²:

Առաջնորդի համար կայունությունը հիմք է ու միջոց ապագան կանխատեսելու, ուստի և նույն առաջընթացը կայուն կառավարելու համար: Ապագան ներկայի շարունակությունն է, ուստի ներկայի իմացությունը հիմք է գալիքի ձևավորումը կառավարելու: Եթե կայունությունը, որպես միջոց, կարող է կամքել ներկան ու ապագան, ապա կայունությունը, որպես ինքնանպատակ, կարող է խոչընդունել ապագայի ձևավորմանը: Կայունությունը որպես գարգացման պայման ու հիմք պիտի ընկալվի հակառակության կամքի կառավարմամբ գրադարձների համար,

լինի ոչ թե արտաքուստ թելադրված «կանոն», այլ գիտակցված արժեք: «Պետական մտածողություն» ընդհանուր ձևով չուարբերակված գործածվող (աակայս զանազան միջոցառումների ժամանակ որոշ պէտական այրերին բավական շուայլորեն շնորհվող) հասկացության կարևոր բնութագրիչներից մեկը կայունության այդօրինակ ապահովումը պիտի լինի որպես մտածելակերպի բաղադրիչ և գործելակերպ: Կայունություն՝ ո՞չ ի հաշիվ առաջընթացի, ո՞չ զարգացման արգելակման կամ խարարման ձևով:

Կայունության և փոփոխականության դիալեկտիկայի անտեսումը հանգեցնում է երկու ծայրահեղության. առաջնորդը իր կառավարչական գործունեությամբ կա՝ մ ուժեղացնում է իշխանության ուղղաձիգը, գերկենատրուսացնում կառավարումը (պէտական բյուրոկրատիան անխոչընդուռություն ինքնավերարտադրման լայն հետարարություններ է ստանում), կա՝ մ կատարում է անհիմս փոփոխություններ, վերաձեռնումներ (երբեմն կաևխավ «քարեփոխում» հոչակվելով): Այս երկու ծայրահեղությունների հանգամանեցը միանգամայն տեղին է դարձնում «ոսկի միջինին» կոչ անող հետևյալ հորդորը. «Կառավարիչների և առաջնորդների մեծ մասը թիվ է հետաքրքրված իրենց գործունեության բուն եռթյամբ, այս է՝ կայունության կառավարմամբ»¹³: Իսկ այս խնդիրը, ինչպես ըսնարկեցինք, ներդաշնակ լուծում է ստանում միայն նապատակի և միջոցի ճիշտ հարաբերակցության պայմանով:

Առաջնորդումը որպես սպասարկում: Կողքացու հիմնարար ըմբռնումներից մեկն է՝ առաջնորդը հավատարիմ ծառայի նման է քաջավորում¹⁴: «Լավ առաջնորդն ամենից առաջ ծառա է» (A good leader is primarily a servant). սա էլ, ինչպես եշվեց. «սպասարկող առաջնորդման» փիլիսոփայական հեերն է¹⁵: Առաջնորդի գերիսնդիրը ընդհանուր նպատակներին հասնելն է՝ հանրույթի անդամների շահերին ծառայելով, նրանց բարեկեցություններ ապահովելու ճանապարհով: Սպասարկու առաջնորդը բաց է, մատշելի, առավելություն չունի մյուսների հանդեպ իր զրաված դիրքի առումով: Որպես հոգատար խնամակալ՝ սպասարկու առաջնորդը օգնում է մյուսներին լուծելու միջանձնային և գործարար հաղորդակցմանն առնչվող խնդիրները, հարցում՝ բախտումները, ապրումակցման (եմպատիա) հզոր հատկության շնորհիվ՝ կարողանում է ուշադիր ուսկեղեղ

Ենթականերին և հետևորդներին, զգալ և կանխել անզամ շարտահայտված ցանկությունները:

Նկարագրական բնույթի այս ըմբռնմանը (ինչպես նաև դրա տեսական ხիմնավորմանը) պակասում է մի եական հանգամանքը: Առաջնորդի այդպիսին կարող է լինել, եթե ունակ է ոչ միայն իշխանություն (սեփական կամքը իրականացնելու հանուն այլոց շահերի պաշտպանության), այլև ենթարկվելու: Իսկ նման հետարագորությունը իրականություն է դառնում ոչ թե սոսկ տվյալ անհատի անձնային հատկությունների շնորհիվ, այլ ամենից առաջ հանրային իրողության յուրահատկությունների: Իշխանակոր առաջնորդը կարող է լինել նաև հետազանդ կատարող, ուրիշի կամքին ենթակա միայն «ճիշտ», «իդեալական» պետության պայմաններում: Արիստոտելն է տակավին բնութագրել այդ իդեալական պետությունը. ոչ որպես պյատոնյան «զավագույնների կառավարման», այլ «զավագույն օրենքներին» համապարտադիր ենթարկման, «հավասար օրինապահության» վիճակ. «Ըստիանուր առմամբ՝ քաղաքացին նա է, ով մասնակից է թե՝ իշխանուն և թե՝ հետազանդվելուն.... Պետական լավագույն կարգի պայմաններում քաղաքացին նա է, ով ունակ է և ցանկանում է ինչպես ենթարկվել, այնպես էլ իշխան՝ դրսորելով անհրաժեշտ առարինություններ»¹⁶:

Առաջնորդի այդօրինակ՝ այլոց կամովին ենթարկվելու առարինության անդադարձել է Նիկոլա Սարբավելիին, որա դրսուրմանը տալով ամբողջ հանրության բարոյական առողջության յուրատեսակ առջալ-փիլիսոփայական բնութագրիչի ևշանակություն։ «Հռոմի քաղաքացիները, փառքի հանդեպ սիրով հանդերձ, երբեք իրենց համար նվաստացուցիչ չեն համարել այսօր ենթարկվել երան, ում երեկ երանայել են, և ծառայել որպես հասարակ գիլավոր այն գործում, որի պեսուն նև եղել բոլորովին վերջերս»¹⁷: Սարբավելիի մտքի շարունակությունը, թե «այս սովորույթն ամբողջովին հակասում է ժամանակակից քաղաքացիների հայացքներին, սովորույթներին և ըմբռնումներին»¹⁸, արդարացի է, անտարակույս, ոչ միայն XVI դարի Վենետիկի, այլև XXI դարի հանրության համար: Իսկ սա արդեն խիստ կասկածելի է դարձնում արդի պայմաններում սպասարկման գաղափարի իրական լինելը, որքան ել իշխանավորներն իրենց մատուցեն որպես «հանրության ծառա»:

Սպասարկող առաջնորդմանն առնչվող այլ նրբություն է կա, որը նկատել է Դեկիել Գոլմանը: Անուարակոյս, համաձայնում է նա, հետևորդներին և ենթականերին ամեն ինչում ընդառաջ գնացող, վստահող, ոգնորող առաջնորդը համապատասխան վերաբերմունք է ստանում ի տրիտուք՝ եռանդուն աշխատանք, նախաձեռնողականություն, փոխադարձ վստահություն: Բայց այդօրինակ սպասարկումը որոշակի սահմանից չպետք է անցնի: «Անհանդուրժելի է, եթե առաջնորդն սկսում է ծնողի պես, ենթականերին զերծ պահել բոլոր տեսակի լարվածություններից և սրբեսից. չէ՞ որ նրանց մկունությունը մեծանում է հատկապես աշխատանքի ընթացքում անխուսափելիորեն առաջացող տարատեսակ անհարմարավետությունները հաղթահարելիս: Ճետատես առաջնորդը շափազանց լարվածության պարագայում կփորձի գործել որպես աևլուանգության խարիսխ (եթե դա հետաքոր է) կամ էլ առնվազն այնպես կանի, որ պայմանները շվատթարանանք»¹⁹: Այս ծայրահեղ խեամակալության վտանգը հատկապես վերաբերում է պետություննեան կողմանություն փոխարաբերությանը. Եթե, մի կողմից՝ պետությունն է ինքն իրեն մատուցում որպես հասարակության անդամների բոլոր հոգաերը հոգալու պատրաստ գոյացություն, մի իսկական թումասհորբյան Լեվիաթան, մյուս կողմից՝ քաղաքացիների մեջ սերմանվում է «հուատիզմ» (Քրանեսերեն «Etat»՝ «պետություն» բառից) ամեն ինչ պետության վրա բարդելու հոգեբանություն՝ դրանից բխող սեփական անգործունյա վարրագծի ինքնարդարացման փիլիսոփայությամբ:

Առաջնորդումը որպես ինքնամսություն: «Առաջնորդ դառնալու մասին» գրքում Ռուբրեն Բենիսը արձանագրում է. «Մեր կյանքի պարադոքսներից մեկն է այն, որ լավ առաջնորդները վեր են բարձրանում ի հեճուկս իրենց թերությունների, այսինչ վաս առաջնորդները բարձրանում են շնորհիվ իրենց թերությունների»²⁰: Այս արտասոց երևույթը, որ աերածան չէ նաև հայաստանյան կյանքից, մասսամբ, կարծում ենք, բացատրվում է իրանուկ, թէ ինչպես է առաջնորդը (ապագա առաջնորդը) իրեն մատուցում հանրությանը: Մեր հերիաքի հերոսը մի թէ դրոշը բարձր չէր պահում՝ «Անհայթ հերոս Թաջ Նազար, որ մին զարկի շարդի հազար», հետո էլ չէր մոռանում իրադարձություններն իրեն համար շահեկան լույսով մեկնաբանել: Անձի ինքնամսությման սոցիալ-հոգեբանական

Նշանակության մասին գարմանայինորեն դիպուկ դիտարկում ունի Վաերամ Փափազյանը. Նույնիսկ դա անվանել է «Հանձնարի օրենք»: Սարդ կա մի փոքր շնորհը ունի. Նկատում է Փափազյանը. բայց այսքան է իրեն բարձր գևահատում. հավակնութ մատուցում շրջապատին, որ ի վերջո, մյուսներն էլ են ընդունում նրա ուժացված արժանիքը: Բայց ահա խելապես բազմաշնորհ մարդը իրեն քնակ էլ այդպես բարձր չի գևահատում նույն այդ բազմաշնորհության պատճառով²¹: Ահա և միջակությունները, որպես կանոն, ոյուրին հայտնվում են վերևում. իսկ օժովածները հազվադեպ:

Հետապոր է ինարկե, առաջնորդ դառնալ պատահականորեն, հասգամասքների բերումով, բայց դառնալուց հետո առաջնորդն իր դիրքը պահպանելու համար հարկադրված է հետևորդների վրա մշտապես աղջելու սեփական կամքի իրականացնելու նպատակով: Բորևամատուցումն ազդեցության միջոցներից է, և առավել կարևոր է, եթե աևազ ձգուում է քաղաքական առաջնորդյան: Ինարկե, բռն այս ձգուումի հիմնավորվածությունն առանձին քննարկման խնդիր է: Կան դեպքեր, եթե հարկ է լինում համաձայնելու ամերիկացի սոցիալական հոգեբան Արքահամ Մասլոտի ախտորոշմանը. «Այս, որ մարդը չի ձգուում առաջնորդելու. նրա օգտին է խոստում: Միևնույն անհատի ձգուումը՝ գրավելու հրամանաւարական դիրք, պեսոք է մեզ նախազգուշացնի, և կարող է վկայությունը լինել այդպիսի դերին նրա անհամապատասխանության մասին»²²: Այդուհանդերձ, ոչ մի առաջնորդ չի կարող հաշվի չառնել հանրությանը որոշակիորեն մատուցվելու խնդիրը: Ոչ միայն և ոչ այնքան առաջնորդության հավակնողի գաղափարները, ծրագրերը, հատկությունները, աևանական վարքը, առանձնաշնորհը (քարիզման), ընտանեկան կյանքը, հրապարակային խոսքը, որքան դրանց պատշաճ «փաթեթավորում» ու մատուցումը համապատասխան թիրախ-հանրույթներին դարձել են գովազդի, քաղաքական շուկայի սակարկության, հանրային կապերի կառավարման (PR) առարկա²³:

Առաջնորդումը որպես առաջնորդի ինքնավերարտադրում: «Ըստրությունների մեջ ևս մեւս մնացինք նույն ասիացիները. ինչպես որ ասիացիներ ենք ամեն բանի մեջ.... Ժողովուրդը, ըստրողը չէ որ կարտահայտվի մեր մեջ, այլ իշխողները. Երկիրը կառավարողները իրենց

ամբողջ ազդեցությունն ու իշխանությունը գործ դնելով ի սպաստ օրվա կառավարության և իշխող կուսակցության²⁴: Այլ է երկիրը, այլ է կառավարությունը, բայց Սիմոն Զավարյանի հարյուրամյա վաղեմության այս բնութագրումը, քաղաքացիական շիտակ հասարակության հիմնական խոչընդոտի անվանումը նույն է, այս է՝ ստեղծվել է «մեկ կուսակցության հարատև իշխանություն»: «տեսակ մը կուսակցական բոնապետություն»²⁵:

Ժողովրդավարական առաջնորդման ամենամեծ խոչընդոտը, իսկապես, իշխանությունն ընտրության ճանապարհով փոխելու անհետարինությունն է, այդորինակ «հարատև առաջնորդությունն», ինքևավերարտադրվող վերևախավի պարտադրված առաջնորդումը: Անձանց ու կուսակցությունների անվանումները չեն եականը, այլ դրանց հանրային դերակատարման որակով վերարտադրվող այն վիճակը, երբ հոչակված ազատությունները վերածվում են ժողովրդավարության ծաղրանկարի: Փոխակերպումային բնույթի հայաստանյան հասարակությունը բազում հիմնախնդիրներ ունի լուծելու²⁶, դրա պարտադիր պայմաններից մեկն առաջնորդման որակական փոփոխությունն է: Հին Աթենքում օստրակիզմի միջոցին էին դիմում. քվեարկությունը բացահայտում էր և ժողովրդի կամքով արտաքսման դատապարտում առավել ենդինակավոր այն առաջնորդներին, որոնցից հանրությունը բոնապետության հաստատման վտանգ էր տեսնում: Ճետխորհրդային շատ պետություններում անգամ քվեարկության կարիք չկա, հարատև առաջնորդումը, բոնապետի վերածված առաջնորդի վերարտադրությունը հանրության համար բնավել գաղտնիք չեն: Սակայն օրենսդրական ճանապարհով իշխանափոխության հետափորությունը փակվում է առաջնորդող վերևախավի «Թէ տերը ես եմ՝ բակլան խաշած եմ ցանում» կենսափիլիսոփայությամբ՝ դրա բոլոր դրսեորդումներով հանդերձ: Իհարկե, այսուեղ ևս հարկավոր է տարբերակված մոտենալ. մի բան է առաջնորդող անհատի և խմբավորման՝ սեփական անփոխարինելիության, գրեթե փրկյական առաքելության հանդեպ հավատը, մեկ այլ բան՝ իշխանությունից գրկվելու և հանցավոր գործունեության համար պատասխան տալու հեռանկարից վախը:

Առաջնորդումը քաղաքացիական մշակույթի համատեքստում: Եթե մեր նպատակը քաղաքացիական հասարակության բնականոն զարգացումն է հանրային կյանքի բոլոր դերակատարների գործողությունների համապատասխան միտված առաջնորդման ապահովումը, ապա պիտի մտածենք «քաղաքացիական մշակույթի» զարգացման մասին (տարբերակելով «քաղաքական մշակույթից»):²⁷

Քաղաքական մշակույթը, որպես իշխանության հիմնախնդրից ածանցվող արժեքային համակարգ, չի կարող շպարունակել հակասական տարրեր: Խոսքը իշխանության ձգուղ հակուային տարրեր ուժերի, դրանց շահերի, նպատակադրումների, գործելակերպերի հակադրության և անզամ բախման մասին է Քաղաքական նպատակադրումների շուրջ համախմբվածները ձեռնարկում են որոշակի քայլեր՝ իշխանություն նվաճնու համար: Քաղաքական մշակույթի համեմատաբար նեղ հիմքով սոցիալականացմամբ «մենք»-ի և «նրանք»-ի բնականոն տարբերակումը որոշակի պայմաններում վերածվում է հակադրության և ապա՝ անհաջող հակասության: Քաղաքական մշակույթը հիմնավորում է «Նպատակն արդարացնում է միջոցները» գործելակերպը: Խոկ սա նշանակում է նաև, որ քաղաքական անհանդուրժողականությունը ոչ միայն չունի ներքին արգելակեներ, այլև միտված է վերածվելու քաղաքական ծայրահեղականությունը: Գարեգին Նժենիք «միջկուսակցական կատաղի պայքարը», փոխադարձ «կույր ատելությունը», «եեղսիրու և իրարամերծ կօիվը» համարում էր հայոց ամենակործանարար աղետը²⁸: Խոկ սա խոր արմատներ ունի: «Կուսակցական հոգեբանությունը իր կառուցվածքին մէջ խոկ անհաջող է գործակցութեան և համերաշխութեան գաղափարին, թէ՝ տեսականօրէն և թէ՝ գործնականօրէն: Անհաջող է տեսականօրէն, որովհետեւ գործակցութեան մէջ կը տեսնէ անտեսումը, մոռացումը կուսակցութեան անունին, դերին ու փառքին.... Գործնականօրէն ալ կուսակցականը դժուարութեամբ կը հաշտուի զիջումի գաղափարին հետ որ անհրաժեշտ պայմանը կը կազմէ գործակցութեան»²⁹: Շատ սխալված չենք լինի, եթե ասեք, թէ մերօրյա քաղաքական առաջնորդներին հարազատ է Ընկ. Բ. Փախզունու հավատու հանգանակը: «Մազ որ ձեր նախապաշարյալ ու հետադիմական զանկերու համար տարօրինակ ու

անբացատրելի կ'երևա, մեր գիտական ուղեղներու համար շատ պարզ ու քևական է: Երևոյթի գաղտնակիրքը նրանումն է, որ մն 'նք միայն կը գտնելիք ուղիղ ճանապարհի, օրինավորության շավդին, ճշմարտության գծին վրա և որովհետո ուղիղ, օրինավոր ու ճշմարիտ ճանապարհը չէ կարող երկու կամ երեք ըլլայ, անոնք որ ճանապարհեն չեն քայլեր՝ իհարկէ կը մոլորին խոտոր ուղիներու մեջ.... Չիք ուղղություն և ճշմարտություն արտաք մեր կուսակցության»³⁰: Հարկավոր է հասկանալ, որ հայաստանյան հասարակությունը ընկդմվեց արմատական քաղաքական վերափոխումների հորձանուտն առանց քավարար քաղաքացիական մշակույթի: Դրանով է մասամբ բացատրվում, որ մեզանում հանրության մեծ մասը կարող է շատ արագ քաղաքականանալ, սակայն առանց ձեռավորված քաղաքացիական գիտակցության վերափոխումների տրամադրության կտրուկ վերելքը բնավ է կառուցողական հունով չի ընթանում, իսկ վայրէջքը հանգեցնում է հանրության առավել պառակտումներ:

Ի տարբերություն քաղաքականի՝ քաղաքացիական մշակույթը հասարակությունն ամբողջացնող արժեքային համակարգ է, գերծ է քաղաքական մշակույթին բնորոշ անհանդուրժողականությունից: Այստեղ տիրապետող է ոչ թե ճշմարտության մենատիրումը, այլ գաղափարական բազմակարծության կանխադրույթը: Քաղաքական մշակույթի դիրքերից պետական իշխանությունը քաղաքականությամբ գրադարձնության վերաբերության իրականացնումը ուղղված է այդ իշխանության վերաբերությանը: Մինչդեռ քաղաքացիական մշակույթի դիրքերից պետական իշխանությունը հանրային ծառայությունն է ոչ միայն իշխներու իրավունք, այլև առաջնորդելու և կառավարելու պարտականությունն: Քաղաքացիական մշակույթը, այսպիսով, պետության քաղաքացի-առաջնորդ է ձևավորում, ոչ թե սոսկ կուսակցական մարտիկ: Ուստի քաղաքական սոցիալականացնումը կյիսի լիարժեք և ներդաշնակ, եթե խարսխվի ոչ թե քաղաքական մշակույթի, այլ քաղաքացիական մշակույթի վրա, այլ կերպ ասած՝ ոչ թե մասի, այլ ամբողջի վրա: Միայն այդ պարագայում՝ քաղաքական դեկավարը, լինելով կուսակցականորեն կողմնապահ («կուսակցական» հենց ստուգաբանվում է «կողմնապահ» իմաստով, ինչպես անզերեն «party» բառի լատիներեն հիմքն է «մաս», «մասնակի» նշանակում) կկարողանա, այդուհանդեռձ, գերծ մեալ փանջունիական ան-

հանդուրժողականությունից, լինել լիարժեք բաղաքացի և առաջնորդ: Բաղաքացիական մշակույթի շնորհիվ է հնարավոր առաջնորդի մեջ ձևավորել հոլիստական մոտածելակերպ՝ ի տարրերություն կուսակցական-հատվածական (սեզմենտայիստական) մոտածելակերպի: Մասի և ամբողջի դիալեկտիկայի ըմբռումը հիմք կարող է նաև դառնալ սեփական կուսակցության բարոյական պատասխանատվությունն օգալու: Ճշտեք՝ սա ոչ թե ողջ հասարակությունը ապակուսակցականացնելու անհերեք պահանջ է, կամ էլ մեկ-միասնական կուսակցություն դառնալու վտանգավոր հորդոր (հիշենք ԽՄԿԿ-ի մենատիրությունը), այլ լիարժեք բաղաքացի լինելու պայման: Բաղաքացիական մշակույթի հիմնամբ սոցիալականացած անձնն ընդունում է ուրիշների նմանօրինակ իրավունքը՝ լինելու կամ չինելու կուսակցականորեն միակողմանի:

Բաղաքակիրք ոչ մի հասարակություն չի կարող հստակ հեռանկար ունենալ առանց կուսակցությունների առաջնորդման: Այնպէս որ խնդիրը ոչ թե կուսակցագերծումն է, այլ կուսակցությունների զվաճակոր պարտականության ճշգրտումը՝ որպէս բաղաքացիական մշակույթ ձևավորող հիմնական հաստատության: Եթե հասարակության բաղաքական համակարգի կառուցվածքը (հաստատությունների կազմը և հարաբերակցությունը) և գործառությունը (պետականական ուժիմը) ձևավորվում են առավելապէս պետական իշխանությամբ, ապա բաղաքական համակարգի գաղափարական և վարքաբանական բաղադրիչները մեծապէս պայմանավորված են կուսակցությունների գաղափարական նպատակադրումներով, ծրագրերով, գործունեության եղանակներով, բարոյական արժեքներով, առաջնորդների դավանած վիլիսոփիայությամբ և վարրութարքով: Կուսակցությունները և նրանց առաջնորդները մասնակցում են հասարակության բաղաքական կյանքին ոչ միայն ընտրությունների ընթացքում, եթե ձևավորվում են իշխանության և կառավարման համապետական ու տեղական մարմինները: Կուսակցությունների դերակատարումը վճռորոշ է բովանդակ բաղաքական համակարգի ձևավորման և գործառության մեջ, կուսակցությունների գործելակերպով են պայմանավորված ոչ միայն պետական իշխանության բնույթը, այլև բաղաքական մյուս հաստատությունները, ազդեցիկ բաղաքական հոսանք-

Ները, գերիշխող բաղաքական գաղափարները, հանրայնորեն նշանակայից բաղաքական գործողությունները:

ՀԱՌԱՋՈՒԵՐ

- 1.Տէ՛ս V. Mirzoyan, Yeznik Koghbasti and the modern theory of Servant Leadership // Հանրային կառավարման հիմնախնդիրներ: Պրակ.Ա., Եր.: ՎՄՎ-Պրիստ, 2013, էջ 303-315:
- 2.Եթե «առաջնորդ» ուրվագծում է միջամասային հաղորդակցման որոշակի իրողություն (առաջնորդ - հետևորդներ /եւթականներ/ փոխարարերության առկայություն), ապա «leader» բառը նշանակում է ևսան «ուղեցույց», «օրինրան», «հաղորդավար» և այլն:
3. C.C. Sidle, The Leadership Wheel. New York: Palgrave Macmillan, 2005, p. 213.
- 4.Տէ՛ս W. Bennis, On Becoming a Leader. New Jork: Basic Books, 2009, p. 41-43; G.A. Goens, Soft Leadership for Hard Times. Lanham (Maryland): Rowman and Littlefield Education, 2005, p. 28-41; S.R. Covey, The 8th Habit: From Effectiveness to Greatness. New York: Free Press, 2004, p. 100-103, 121-123, 360-364; M.Z. Hackman, C.E. Johnson, Leadership: A Communication Perspective. Long Grove (Illinois): Waveland Press, 2004, p. 11-20; www.businessdictionary.com
5. W. Bennis, On Becoming a Leader, p. 43.
6. Ու. Բենիսի հայրէ է համարում մեջբերել ևսան Ռուլլս Սթիվենսի կարծիքը, թէ կառավարիչները բառակուսի զիսարկ են դժում, իսկ առաջնորդները սոմբրերու (W. Bennis, On Becoming a Leader, p. 42):
- 7.Ի դեպ, դրանում հեշտորեն համոզվում ենք ևսան առաջատար կառավարացաների խոսույթում «առաջնորդ» («Leader») և «առաջնորդում» («Leadership») բառերը փոխարինելով «կառավարիչ» («Manager») և «կառավարում» («Management») բառերով (և հակառակը). ասույթի ամբողջական իմաստը ևսան է մնում: Տէ՛ս Վ. Սիրզոյան, Կառավարում և առաջնորդում // Հանրային կառավարման հիմնախնդիրներ: Պրակ.Ա., Եր.: ՎՄՎ-Պրիստ, 2013, էջ 47-49:
8. Տէ՛ս Սենեգալներ / Յու. Սուվարյանի ընդ. խմբ.. 3-րդ. լրացված և բարեկոնխափած հրատ., Եր.: «Տևականգետ», 2009, էջ 350-365:
- 9.Տէ՛ս հանգամանուրեն Վ.Ա. Միքոյան, Управление и лидерство: сравнительный анализ теорий лидерства // «Вопросы философии», 2013, № 6, с. 4-15.
10. P.F. Drucker, People and Performance. New Delhi, 2004, p. 121.
11. Տէ՛ս Լ. Якокка. Карьера менеджера / Пер. с англ., М.: Прогресс, 1991, с. 75-77; M. Maccoby, The Leader: A New Face for American Management. N.Y.: Simon and Schuster, 1981, p. 221-223; Ph.B. Crosby, Completeness: Quality for the 21st Century. N.Y.: Dutton, 1992, p. 100.

12. О. Конт, Дух позитивной философии // Западно-европейская социология XIX века: Тексты. М., 1996, с. 51. Ըստ բազրային ձևակերպութերից մեկի՝ «L'ordre pour base et le progrès pour but»:
 13. C. Grey, The folly of change // World Business, 28 March 2006.
 14. Տէ՛ս Ե. Կողբացի, Եղծ աղասիոց, Եր.: Երևանի համալս. հրատ., 1994, էջ 259:
 15. Տէ՛ս J. W. Sipe, D. M. Frick, Seven Pillars of Servant Leadership: Practicing the Wisdom of Leading by Serving. New York: Paulist Press, 2009; T. M. Hall, Becoming Authentic: The Search for Wholeness and Calling as a Servant Leader. La Crosse (WI), 2007; J. A. Autry, The Servant Leadership: How to Build a Creative Time, Develop Great Morale, and Improve Bottom-Line Performance. New York: Crown Business Publishers, 2004.
- Համարվում է, որ ուսու «servant leadership» եզր առաջարկել է ամերիկացի փիլիսոփա Ռոբերտ Գրենլիֆը (սեղ և R. K. Greenleaf, The Power of Servant Leadership. San-Francisco: Berrett-Koehler Publishers, 1998) որի պատվին էլ ԱՄՆ Խորհրդային խանութեան Պենսիֆիլի քաղաքում ստեղծվել և գործում է «Greenleaf Center for Servant Leadership» հետազոտական կենտրոնը:
16. Аристотель, Политика // Сочинения в четырех томах. Т. 4. М.: Мысль, 1984, с. 471.
 17. Н. Макиавелли, Рассуждения о первой декаде Тита Ливия. М.: Мысль, 1996, с. 182.
 18. Ալոյ:
 19. D. Goleman, Social Intelligence. The New Science of Human Relations. London: Arrow books, 2007, p. 277–278.
 20. W. Bennis, On Becoming a Leader. New York: Basic Books, 2009, 44.
 21. Վ.Զ. Փափազյան, Հնուաղարձ հայոց. զիր երկրորդ // Երկեր 5 հատորով. հան. 2, Եր.: Սով. գրադ, 1981, էջ 131:
 22. A. Маслоу, Маслоу о менеджменте / Пер. с англ., СПб: Евразия, 2003, с. 416.
 23. Տէ՛ս հանգամանքին և. Ղուկասյան, Քաղաքական մարքերինց, Եր.: Տեսչութեան, 2012, էջ 264–286; Имидж лидера. Психологическое пособие для политиков / Отв. ред. Е.В. Егорова-Гантман. М.: Знание, 1994; Р. Салмон, Будущее менеджмента / Пер. с англ., СПб: Питер, 2004, с. 36–49; D. Goleman, Social Intelligence. The New Science of Human Relations. London: Arrow books, 2007, p. 82–101; M.Z. Hackman, C.E. Johnson, Leadership: A Communication Perspective. Long Grove (Illinois): Waveland Press, 2004, p. 253–259; A.N. Frymier, M.K. Nadler, Persuasion. Dubuque (Iowa): Kendall/Hunt, 2007, p. 185–201, 220–256; S. Leith, Words like loaded pistols: rhetoric from Aristotle to Obama. New York: Basic Books, 2012, p. 219–248.
 24. Ա. Զավարյան, Ըստրություններու շուրջ // Երկեր, Եր.: Երևանի համալս. հրատ., 1991, էջ 129:

25. Անդ, էջ 103:
- 26.Տե՛ս Գ.Ա. Պողոսյան, Հայ հասարակությունը դարասկզբին, Եր.: Լուսաբաց, 2006, Գ. Պողոսյան, Մ. Հարությունյան, Վ. Առաքելյան, Հայաստան. օտարացած հասարակություն, Եր.: Լուսաբաց, 2007, Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումներ, Եր.: Լիմուշ, 2010:
27. Առհասարակ «առաջնորդ – մշակույթ» կապի կարևորությունն առաջինը նշել է ամերիկացի տեսարան Էդգար Շայեր: Ըստ նրա հայեցակարգի առաջնորդի հիմնական հատկությունը մշակույթ ստեղծելն է և մշակույթը կառավարելը. «Ես վստահ եմ, որ մշակույթը սկսվում է առաջնորդից, որը տվյալ հանրությի մեջ սերմանում է իր սեփական արժեքներն ու ըմբռնումները»: Հանրույթը ընդունում է դրանք, ձևափորվում է որոշակի մշակույթ. որը հաջորդ սերունդները ընկալում են որպես իրողություն, ինչև արդեն նշանակում է «մշակույթը է ձևափորում առաջնորդման ընույթը»: Նոր առաջնորդը կարող է ինչ-որ փափոխություններ մտցնել, դրանով ապահովել արտարին միջավայրում կազմակերպության մկուն հարմարումը: Ուստի հաջողակ է այն առաջնորդը, որը, ամենից առաջ, փորձում է ըմբռնել տվյալ մշակույթի զարգացման հիմնական միտումները (E.H. Schein, *Organizational Culture and Leadership*. San Francisco: Jossey-Bass Publishers, 1997, p. 1-2):
28. Գ. Նժդիկ, Բաց ևամակներ հայ մտավորականութեան, Պեյրու, 1929, էջ 25-32:
29. Լ. Զորմիսյան, Կուսակցութիւնները, Եր.: Նախիի, 1995, էջ 199-200:
30. Ե. Օոյյան, Ծնկ. Բ. Փակունի, Եր.: Հայաստան, 1989, էջ 246-247: